

ԱՆՎԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏ

ԳԵՐՇ. Մ. ՌԵՍԶԻ ԱՐՔԵՊՍ.Ի ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Բնթրույրի Արքեպիսկոպոս և Անկիւքան Եկեղեցւոյ Պետ Գերշ. Մայրը Ռ.Վզ.՝ Արքեպիսկոպոս Ապրիլի ընթացքին դէպի Սուրբ Երկիր և այլ վայրեր շրջապատյոյ մը ձեռնարկած ըլլալով և նպատակ ունենալով Անկիւքան Եկեղեցիի ժողով մը դաժարեղ Երուսաղէմի մէջ, Երաթ, 23 Ապրիլի առաւօտեան ժամը 10-ին այցելել Սրբոց Յակոբանոյ Վան. և ու Պատրիարքարանը, իրեն կ'ընկերանային Մաթթիէն Արքեպիսկոպոս և Նաճիպ Քուպէշե Եպիսկոպոս:

Գերաշնորհ Արքեպիսկոպոսը Մայրամբանի ժողովին ընդանուեցաւ և Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Զօր, Մխարանութեան և Ժառանգաւոր սաներուն կողմէ և զանազանքու զուարթ երգին ընդմէջէն առաջնորդուեցաւ Մայր Տաճար:

Ապա, Բափօրով բարձրացաւ Պատրիարքարան, ուր Դիրեկտիւրապետանան էր ամենէն շնորհ և անկեղծ հիւրասիրութիւն մը:

Բարի զաւառաի խօսք տանելով, Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Զայրը ըստ:

Գերաշնորհ եղբայր,

Մեզի հաւար մեծ ուրախութիւն և միանգամայն պատիւ է Ձերդ Գերաշնորհութեան ճեղկայութիւնը մեր զարուար այս վամբին ու Պատրիարքարանին մէջ:

Երբայդ անգամ է որ երուտադէմի Սրբոց Յակոբեանց Մխարանութիւնը պատիւը և առամանաշնորհ կ'ունենայ ողորմելու Անկիւքան Եկեղեցիի պետը. առաջին անգամ այդ հաճոյքը ունեցանք Գոգմաւ Արքեպիսկոպոսի այցելութեան առիթով, երկրորդը՝ յամձին Յիշէր Արքեպիսկոպոսի: Այժմ Ձերդ Գերապատուութիւնն է որ մեզի կ'ընծայէ նոյն վայելքը:

Պաշտօն, մեր երկու Եկեղեցիներու յարաբերութիւնները եղած են սիրալիր և համերաշխ, և ասիկա ապահովաբար այն պատճառաւ մանաւանդ՝ որ մեր գոյգ Եկեղեցիները իրենց բրիտաննէական իրաւ ապատեմութեամբ գիտցած են եղբայրամալ՝ յամում բրիտաննէական սիրոյ:

Այս առիթով կ'ողորմեմք ձեռն. Ձերդ ընկերացող գերաշնորհ արքեպիսկոպոսները և Եպիսկոպոսները, մաղթելով որ բոլորին ուխտատուութիւնը ի Ս. Երկիր ընդառնական ըլլալ և Ձեր ժողովը այս Սուրբ Փառաքին մէջ՝ յաջողութեամբ պատկուի:

Մեր շնորհակալութիւնները Գերաշնորհ Մաթթիէն Արքեպիսկոպոսին, զորում ազնւութեան շնորհիւ մեզի տրուեցաւ պատեհութիւնը ողորմելու Անկիւքան Եկեղեցւոյ Գերապոյն Պետն և իրեն ընկերացող բարձրաստիճան կրօնականները:



Ն. Աճեմոսյանը և Գրաշնորի Մ. Ռեմզի Արհեստագործական Մայր Տաճարի մուտքին:

իր պատասխան-խօսքին մէջ, յարգարժան հիւրը ըստ:

Ձերդ Ամենապատուութիւն,

Մեծ հաճոյք է ինձի համար ազունել Ձեզ հոս, Սուրբ Քաղաք իմ առաջին ուխտաւարութեան, եւ այցելել Ձեր շատ գեղեցիկ Փարոքարքարանը: Բազմաթիւ տարիներէ ի վեր մասնաւոր բարեկամութիւն գոյութիւն ունեցած է Ամլիխան եւ հայ եկեղեցիներու միջեւ: Այլարիւր բոլոր կողմերը գտնուող Ամլիխաններ մեծ հիւսցում ունեցած են հայերուն համդէպ. որոնք դժուարութիւններու եւ փորձութիւններու երկար տարիներու ընթացքին միշտ Իւստատարի գտնուած են Քրիստոսի: Երբ հայեր եկու գտնուած են իրենց հայրենիքէն միշտ այ իրենց եկեղեցին հղած է միացնող կապը բարձր միջոց: Մենք խորունկ յարգանք եւ շնորհակալութիւն ունենք համդէպ այն անհատներ հայերու, որոնց անունները, դարերու ընթացքին, աւելցած են մարտիրոսներու երկար ցանկին՝ Քրիստոսի վրայ իրենց անխախտ հաւատքին պատճառաւ:

Հետեւաբար ինձի համար մասնաւոր հաճոյք է ընդունելի Ձերդ Ամենապատուութեան կողմէ այսօր շնորհ հիւրասիրութեամբ, եւ արժանաւոր Սուրբ Տեղեաց Ձեր միաբանութեան եղբայրական ողջունին:

Ամլիխա մէջ մենք ամենէն սերտ կապեր ունինք հայ եկեղեցիներ հետ, որ կը գտնուի Սրբոց Յակոբեանց այս վանքին միաբան եւ մեր սիրելի բարեկամ Պետկ Արքեպիսկոպոս Թումայեանի առաջնորդութեան տակ: Առանձնաշնորհ ունեցած եմ պաշտամունք մատուցանելու Ս. Սարգիս եկեղեցիին մէջ, եւ Լամպէթի Պալատ ընդունելու Նորին Սրբութիւնը Վազգէն Կաթողիկոսը՝ իր երկու այցելութիւններուն ընթացքին:

Իմ մեծ յայտ է ինչ ժամանակէն այցելել Նորին Սրբութեան Էջմիածնի մէջ, Հայաստան: Եթէ երուսաղէմէն դէպի Հայաստան ճամբորդութիւնը մուգ բարդ ըլլար, այստեղէն պիտի երթայի Հայաստան՝ ողջունելու զինք: Հակառակ որ տակաւին չունիմ առանձնաշնորհը Հայաստան այցելած ըլլալու, ինքզինքն իրապէս հայկական հողի վրայ կը զգամ երբ կը հանդիպիմ Ձերդ Ամենապատուութեան եւ հայ բրիտաններու հոս, Սուրբ երկրի մէջ:

Կ'ազօրեմ առ ամենակարգով Աստուած, որ Ձեզի շնորհէ, սիրելի եղբայր մեր հրիստոս, իր օրհնութիւնները՝ որդէսգի կարենաք Ձեր հովանաւորութեան վստահուած հաւատացեալ ժողովուրդը ուղիղ ճամբայէն առաջնորդել: Կ'ազօրեմ նաեւ որ մանաւանդ հոս. Սուրբ այս Քաղաքին մէջ մեր երկու եկեղեցիներուն միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող սերտ կապերը աւելի՛ զօրանան՝ մինչեւ որ մեզի տրուի վայելքը ամբողջական եւ տեսանելի Միութեան (սրբութեան եւ ճշմարտութեան մէջ), որ մեր Օրհնեալ Տիրոջ կամքն է իր Եկեղեցիին համար:

Ապա, Գերաշնորհ Ռէմզի Արքեպիսկոպոս Պատրիարք Սրբազան Հօր Նուբերեց Քիւթնի Քրիստոսի Հիմարդման 900-ամեակը խորհրդանշող գեղեցիկ պիտի մը ինչպէս Նաեւ իր Հեղինակութիւնը եղող յօդուածներու ժողովածուի մը մակագրուած մէկ օրինակը:

Հիւստիստիսթենէ եւ մանրմիկ խոսակցութենէ մը հետք, Պատրիարք Սրբազան Հայր եւ Միաբանութեան անդամները ընկերացան յարգարժան Հիւրին միջեւ մայր մուտք եւ սիրովոր ողջուններով բաժնուեցան Անկիւլան եկեղեցւոյ Պետէն եւ ընկերակիցներէն:

Երէջւորթի, 26 Ապրիլ 1966, Գերաշնորհ Արքեպիսկոպոսն ու իրեն ընկերացող Անգլի-
քան Եկեղեցւոյ աւելի քան 25 բարձրաստիճան կրօնականները ճաշի հիւրը եղան Պատրիարք
Սրբազան Հօր եւ Միաբանութեան՝ Պատրիարքարանին մէջ:

Ճաշի վերջաւորութեան, Ծափողջոյններու ընդմէջէն՝ Նորին Ամենապատուութիւնը
Քէնթըրբըրիի Արքեպիսկոպոսին ընծայեց Սուրբ Յարութեան համակ ազատանդակուող գեղե-
ցիկ չքանանք, որուն համար Գերլ. Արքեպիսկոպոսը իր զգացումս շնորհակալութիւնները
յայտնեց:

Յաջորդ օր, Պատրիարք Սրբազան Հայրը ընդունեց հետեւեալ նամակը.

Ն. Ամենապատուութիւն

27 Ապրիլ 1966

Երուսաղէմի Հայ Պատրիարքին.

Զերդ Ամենապատուութիւն,

Ի բոլոր սրտէ կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել այն հայկապ ընդունելու-
քեան համար, որով երկ սփռնելի ճաշկերոյքով մը պատուեցիք ինձի ըմկերացող Անգլի-
քան Արքեպիսկոպոսները, Մետրոպոլիտներն ու գիւ: Անոնք բոլորն ալ կը միանան ինձի
ուղղելու օրտագգած շնորհակալութիւններ՝ Զեր ազնուութեան եւ հիւրասիրութեան հա-
մար:

Ընծե հաճոյք էր անգամ մը եւս այցելել Զեր գեղեցիկ վանքը, որ ամկտակած Երու-
սաղէմի ամենէն հաճելի վայրերէն մին է:



Յարգելի հիւրը Ն. Ամենապատուութեան կը յամճէ խորհրդամիշ պնակը:



Գերշ. Մ. Ռեմզի՝ Ն. Ամենապատուութեան եւ Միաբանութեան տնօրէններուն հետ,
Պատրիարքարանի Դահլիճին մէջ:

Սակայն կը փափաքեմ նաեւ շնորհակալ ըլլալ այն մեծ պատիւին համար, որով ինծի շնորհեցիք Սուրբ Յարութեան Շքանշանը: Ամբողջ կեանքիս ընթացքին զայն պիտի պահեմ որպէս ամենէն սքանչելի յաշարար մը դէպի Սուրբ Երկիր կատարած առաջին ուխտաւորութեան: Միաժամանակ զայն կը մկատեմ խորհրդանշիչ մը այն մեծ գնահատանքին եւ սիրոյն՝ որ գոյութիւն ունի մեր երկու եկեղեցիներուն միջեւ:

Կը յուսամ որ կարող պիտի ըլլամ Ձեզ Ամգլիոյ մէջ պատուել, եթէ պատենութեամբ ունենաք որեւէ ատեն այցելելու մեր երկիրը: Մինչ այդ, արտօնեցե՛ք որ կրկնեմ. Ձեր ԿԱՄՆԱՊԱՏՈՒԹԻՒՄ, ամենէն անկեղծ շնորհակալութիւններս այն շատ զեղեցիկ ընդունելութեան համար, զոր շնորհեցիք ինծի եւ պաշտօնակիցներուս, Սուրբ այս Քաղաքին մէջ:

Թող ամենակարողն Աստուած շարունակէ իր օրհնութիւնն ու հովանաւորութիւնն ամպական ընել Ձեր եւ Ձեր հաւատացեալ ժողովուրդին վրայէն:

Ձեր եղբայրը ի Քրիստոս.

Մ Ի Ք Ա Յ Է Լ

Արքեպիսկոպոս Քեմքըրպըրիի

եւ Առաջնորդ Համայն Ամգլիոյ

